

28.01.2017թ.

**Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորական ուղերձը Հայոց
բանակի օրվա առթիվ**

Հարգելի համաքաղաքացիներ

Հայաստանի Հանրապետության տոնացույցում հունվարի 28-ը արդեն 25 տարի նշվում է՝ որպես Հայոց բանակի օր:

Չնայած երիտասարդ տարիքին՝ ընդամենը 25-ամյա կենսագրությանը, մեր բանակն իր ճանապարհն անցել է պատվախնդրորեն ու դժվարություններին հակակշիռ՝ այն պսակել է հաղթանակներով ու հաջողություններով:

Հայոց բանակը կազմավորվեց հայ ժողովրդի համար վճռական ու բախտորոշ ժամանակաշրջանում, անցավ բարդ փորձաշրջան, թրծվեց մեզ պարտադրված պատերազմում և այժմ իր մարտունակության, փորձառության, պատրաստավածության և ոգու շնորհիվ դարձել է լավագույն օրինակ ոչ միայն տարածաշրջանում:

Մեր պետության թերևս ամենամեծ ձեռքբերումներից է Հայոց բանակի ստեղծումը, որը նաև պետականության հիմնասյուներից մեկն է:

Տոնական օրը ևս մեկ առիթ է՝ անդրադառնալու մեր բանակի անցած ուղուն, ուղի, որ պսակվել է հայ քաջորդիների արյամբ, որոնք վճռական պահին գոհասեղանին դրեցին իրենց կյանքը՝ սրբագործելով հաղթանակի ու խաղաղության ճանապարհը:

Փառք բոլոր ընկածներին, փառք մեր զինվորներին, որոնք իրենց աննկուն կամքի, անսահման հավատի, քաջության, կամային բարձր որակների շնորհիվ դարձան հերոսներ ու հայ ժողովրդի արժանի զավակներ:

Անցյալ դարի 90-ական սկզբին կնքված զինադադարից և փխրուն խաղաղությունից տարիներ անց՝ 2016թ. ապրիլին, հայ ժողովրդին սպասվում էր ևս մեկ փորձություն: 18 տարեկան զինվորի կողքին կանգնեց Արցախյան հերոսամարտում հաղթանակած կամավորը, ու կրկին բռունցքվեցին մեր նպատակն ու պայքարի անկոտրում ոգին: Տարբեր էին ժամանակները, սակայն նույնն էր պատերազմող տղաների ոգին և հայրենասիրությունը, ու հենց դրանց շնորհիվ տոնեցինք հերթական հաղթանակը:

Մեր աչքի առաջ մեր զինվորներն ու հրամանատարները հերոսացման, քաջության, արիության օրինակներ ցույց տվեցին՝ պահպանելով այնքան թանկ խաղաղությունը:

Այս տոնական պահին շնորհավորում եմ հայ զինվորին, նրան, ով օրեր առաջ է համալրել Հայոց բանակի շարքերը, նրան, ով արդեն հաղթահարել է բանակային

կյանքի բոլոր դժվարությունները և հպարտորեն է կրում իր կոչումը, բոլոր նրանց, ովքեր բանակաշինության պատասխանատու գործի ակունքներում են և Հայաստանի զինված ուժերում են գրում իրենց կենսագրությունը, ձեռքը Հայաստանի անվտանգության զարկերակի վրա պահած սպային ու հրամանատարին՝ մաղթելով խաղաղ ու անվտանգ ծառայություն:

Շնորհավորում եմ զինվորների ծնողներին ու հարազատներին՝ մաղթելով համբերություն, հոգեկան խաղաղություն:

Մեզանից յուրաքանչյուրն իր մեջ կրում է Հայոց բանակի մի մասնիկը, նրա երեկն է, այսօրը ու ապագան, և ուրեմն տոնը բոլորինս է՝ մեծից փոքր:

Շնորհավորում եմ մեր համաքաղաքացիներին և մեր ժողովրդին, ՀՀ Զինված ուժերի ներկայացուցիչներին այս նվիրական տոնի առթիվ, պահենք ու պահպանենք արդեն 25-ամյա Հայոց բանակը, ուժ ու վստահության տանք նրան և ուժ առնենք նրանից՝ անպարտ և ուժեղ դարձնելով մեր երկիրը: